

II. 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ «2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»

«2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» նախատեսված էր թվով 426* վիճակագրական աշխատանք՝ ըստ ծածկագրերի, որոնք ըստ կատարման պարբերականության (թվով 1887 միավոր), կատարվել են սահմանված ժամկետներում:

Վիճակագրական աշխատանքներն (ցուցանիշները) իրականացվում (հաշվարկվում) են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հիմնած և վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական չափորոշիչներ (ստանդարտներ) սահմանող «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» (SSԸՀ) և «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին» (SSՀՍ) համապատասխան:

Թվարկվածներից SSԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին, իսկ 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց SSՀՍ-ին (տես՝ ԱՄՀ <http://docs.armstat.am/nsdp/> ինտերնետային կայքը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

2008թ. ապրիլի 29-ին Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական նստաշրջանում Հայաստանն ընտրվել է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի (24 անդամ երկիր) նոր անդամ: Անդամակցությունը չորս տարի ժամկետով է՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

2009թ. փետրվարի 10-ին ԱՄՀ պաշտոնական ինտերնետային կայքում (<http://www.imf.org/external/np/rosc/rosc.asp>) գետեղվել է Հայաստանի վերաբերյալ ԱՄՀ Ստանդարտների և կոդերի պահպանման գեկույցը, որը ներառում է տվյալների որակի գնահատման ձևաչափի օգտագործմամբ մանրամասն գնահատումը:

ՀՀ ԱՎԾ 2010 թվականին կատարած աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են վերոհիշյալ համակարգի հատվածներին, ինչպես նաև «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (դրա հավելվածների) կառուցվածքին (հաջորդականությանը) համապատասխան:

* Ներառյալ 300016, 300017 և 300018 ծածկագրերով աշխատանքները, որոնց կատարման ժամկետը նախատեսված է 2011 թվականին:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ¹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 22 աշխատանքներ (111001- 111009, 112001-112012, 112014 ծածկագրեր) իրականացվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Իրականացված աշխատանքների մասով հաշվարկվել են.

1.ամսական կտրվածքով՝

- ✓ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը օպերատիվ և նախնական տվյալներով,
- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը մեկ շնչի հաշվով օպերատիվ և նախնական տվյալներով,

2.եռամսյակային կտրվածքով՝

- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը նախնական տվյալներով.
 - արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով,
 - ծախսային եղանակով՝ ըստ վերջնական օգտագործման տարրերի,

3.տարեկան կտրվածքով հաշվարկվել և մշակվել են.

- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը մեկ շնչի հաշվով՝ 2008թ. վերջնական հաշվետու տվյալներով և 2009թ.-ը՝ վերանայված հաշվետու տվյալներով,
- ✓ եռամսյակային ՀՆԱ-ի հաշվարկը (2008թ. եռամսյակները՝ ճշգրտված 2008թ. վերջնական հաշվետու տարեկան տվյալների հիման վրա և 2009թ. եռամսյակները՝ վերանայված 2008թ. հաշվետու տարեկան տվյալների հիման վրա),
 - արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով,
 - ծախսային եղանակով՝ ըստ վերջնական օգտագործման տարրերի,
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը բազային տարվա մշտական, միջին տարեկան գներով.
 - 2008թ. ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
 - 2009թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը բազային տարվա մշտական, միջին տարեկան գներով՝ սեզոնային ճշգրտումներով.
 - 2008թ. ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
 - 2009թ. ՀՆԱ-ն նախնական՝ հաշվետու տվյալներով ճշգրտված,
- ✓ Ծախսային եղանակով 2010թ. տարեկան և եռամսյակային ՀՆԱ-ի «ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում» բաղադրիչների վերահաշվարկ՝ 2010թ. վճարային հաշվեկշռի վերջնական տվյալներին համապատասխան, ընթացիկ և նախորդ տարվա գներով:

¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

2008 թվականի հաշվետու տվյալներով իրականացվել են հետևյալ հաշվարկները.

- ✓ արտադրության հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և տնտեսական գործունեության տեսակների,
- ✓ եկամուտների ձևավորման հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և տնտեսական գործունեության տեսակների,
- ✓ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և ծախսային տարրերի,
- ✓ տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ եկամուտների երկրորդային բաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ բնաիրեղեն ձևով եկամուտների վերաբաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ ճշգրտված տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ կապիտալի հետ գործառնությունների հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և ճյուղերի,
- ✓ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) տարեկան հաշվարկ ըստ ենթահատվածների,
- ✓ ազգային հարստության բաղադրիչների հաշվարկը,
 - վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների հիմնական միջոցների արժեքը հաշվեկշռային և մնացորդային արժեքներով՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների 2009 թվականին,
 - բնակչության տնային գույքի կուտակման հաշվարկը 2009 թվականին:

Կատարվել է Ծրագրով նախատեսված 2000-2004 թվականների համախառն ներքին արդյունքի տարեկան և եռամսյակային ցուցանիշների վերահաշվարկ 2005թ. բազային տարվա մշտական, միջին տարեկան գներով, սեզոնային ճշգրտումներով՝ արտադրական եղանակով (ըստ տնտեսական գործունեության տեսակների) և ծախսային եղանակով (ըստ ծախսային բաղադրիչների): Սակայն դրանք չեն հրապարակվել «Հայաստանի ազգային հաշիվները, 2010» վիճակագրական ժողովածուի մեջ՝ հաշվի առնելով միջազգային փորձագետների կողմից տրված հանձնարարականները ՀՆԱ-ի տվյալների հետընթաց վերանայման քաղաքականության վերաբերյալ՝ կապված ՀՆԱ-ի նախորդ տարվա միջին տարեկան գներով հաշվարկի, ՏԳՏՀԴ-խմբ.2 դասակարգչի, ինչպես նաև ԱՀՀ-2008 մեթոդաբանության ներդրման հետ:

Իրականացվել են նաև «Ռեսուրսներ - օգտագործում» աղյուսակների կազմման աշխատանքներ՝ «Կազմակերպությունների օգտագործած արտադրանքի (ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների) և պաշարների վերաբերյալ, ինչպես նաև «Առևտրային հավելագնի» և «Տրանսպորտային հավելագնի» վերաբերյալ միանվագ փորձնական հետազոտությունների արդյունքների հիման վրա:

1.2. Արտադրություն (ծառայություններ)²

1.2.1. Արդյունաբերություն²

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 աշխատանքները (121001-121012 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Արդյունաբերության գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 1-ը՝ ամսական և 6-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են մոնիթորինգում ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերածածկագրման աշխատանքները:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը գուգահեռ, առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առաձգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) իրականացվել է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

2010թ.-ից արդյունաբերության վիճակագրության վարումը իրականացվել է ըստ SՊ-SՀԳ-ի (NACE-rev 2) :

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են արդյունաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի և ք. Երևանի, տնտեսական գործունեության տեսակների, արտադրատեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

² Տես՝ Ծրագիր, Հավելված I:

1.2.2. Գյուղատնտեսություն³

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 32 աշխատանքները (122001-122032 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գյուղատնտեսության և անտառային տնտեսության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 34 պետական վիճակագրական հաշվետվությունների և ամփոփ հաշվետվությունների ձևերով, 4 հարցաթերթերով, ինչպես նաև 4 տեղեկանքներով: Ընդ որում, պետական վիճակագրական հաշվետվություններից, ամփոփ հաշվետվություններից և հարցաթերթերից 10-ն ամսական պարբերականությամբ են, 8-ը՝ եռամսյակային և 20-ը՝ տարեկան: Հաշվետվություններից և հարցաթերթերից 17-ը բուսաբուծության գծով են, 12-ը՝ անասնաբուծության, 2-ը՝ բուսաբուծության և անասնաբուծության, 6-ը՝ գյուղատնտեսությանն առնչվող այլ բնույթի են, իսկ 1-ը՝ անտառային տնտեսության վերաբերյալ:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցից (187 գյուղական համայնք, 7480 գյուղացիական տնտեսություն) 4 հարցաթերթերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն բուսաբուծության և անասնաբուծության, արտադրված բուսաբուծական և անասնաբուծական մթերքի ծավալի, միջին բերքատվության, տնտեսություններում արտադրված մթերքի ըստ ուղղությունների իրացման և դրանց արտադրության վրա կատարված ընթացիկ ծախսերի վերաբերյալ և այլն:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցի վիճակագիրները և վիճակագրության ինչպես մարզային գործակալությունների, այնպես էլ տարածքային բաժինների աշխատակիցները համատեղ իրականացնում են հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում անցկացված համատարած հաշվառման արդյունքների ընտրանքային ճշգրտումներ՝ թիվ 1 ու թիվ 2 տեղականքներով: Ստացված տվյալները օգտագործվում են համատարած հաշվառման տվյալների ճշգրտման համար:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցի վիճակագիրների կողմից անց է կացվել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն, որի արդյունքներն օգտագործվել են հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի և միջին բերքատվության վերաբերյալ տվյալների ճշգրտման համար:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են գյուղատնտեսությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Անտառային տնտեսության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են մեկ եռամսյակային պետական վիճակագրական հաշվետվության ձևով, որի արդյունքները գետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

³Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Հարկ է նշել, որ քանի որ գնումների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրումն իրականացվում էր և՛ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (որպես վարչական ռեգիստր), և՛ ՀՀ ԱՎԾ (համաձայն Ծրագրի) կողմից, ուստի ՀՀ ԱՎԾ կողմից նպատակահարմար գտնվեց դադարեցնել սույն տեղեկատվության հավաքագրումը պետական վիճակագրական հաշվետվական ձևերով:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (հետայսու՝ ՀՀ ՎՊԽ) 29.12.2010թ. նիստում 54-Ն, 55-Ն, 56-Ն, 57-Ն, 58-Ն, 59-Ն, 60-Ն, 61-Ն և 62-Ն որոշումներով ուժը կորցրած ճանաչվեցին գնումների վերաբերյալ համապատասխանաբար՝ Ձև թիվ 6-գնում, Ձև թիվ 7-գնում, Ձև թիվ 8-գնում, Ձև թիվ 9-գնում, Ձև թիվ 11-գնում, Ձև թիվ 13-գնում, Ձև թիվ 14-գնում, Ձև թիվ 15-գնում, Ձև թիվ 16-գնում, պետական վիճակագրական հաշվետվական ձևերը:

1.2.3. Չկնորսություն, ձկնաբուծություն⁴

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի 123001 ծածկագրով ամսական պարբերականությամբ աշխատանքը կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ, իսկ 123002 ծածկագրով վիճակագրական աշխատանքի ավարտը Ծրագրով նախատեսված է 2011 թվականի հունիսի 30-ին:

Չկնորսության ու ձկնաբուծության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են մեկ պետական վիճակագրական հաշվետվության ձևով, որի արդյունքները յուրաքանչյուր ամիս գետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

1.2.4. Շինարարություն⁴

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 11 աշխատանքները (124001-124011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Շինարարության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են թվով 8 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 4-ը՝ ամսական և 4-ը՝ տարեկան պարբերականությամբ):

2010թ.-ի ընթացքում հաշվարկվել են հանրապետությունում իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ամսական պարբերականությամբ և ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի՝ եռամսյակային կտրվածքով, իրականացվել է անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկում, պարբերաբար անցկացվող շրջագայությունների միջոցով ընդլայնվել է բնակչության միջոցների հաշվին կառուցված նոր շինարարական օբյեկտների ցանկը (համացանկը):

⁴ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են շինարարությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, տնտեսական գործունեության տեսակների, ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությամբ պայմանավորված, փոփոխության են ենթարկվել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (հետայսու՝ ՀՀ ՎՊԽ) 05.11.2010թ. նիստում 41-Ն, 43-Ն, 46-Ն, 48-Ն որոշումներով համապատասխանաբար՝ Ձև թիվ 1-ԿՇ (ամսական), Ձև թիվ 2-ԿՇ (ամսական), Ձև ԱԲՇ (ամսական), Ձև ՄՇ (ամսական)) պետական վիճակագրական հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգները:

1.2.5. Տրանսպորտ⁵

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 20 աշխատանքները (125001–125020 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Տրանսպորտի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 19 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 6-ը՝ ամսական, 3-ը՝ եռամսյակային, 10-ը՝ տարեկան պարբերականությամբ): Ընդ որում, ավտոմոբիլային տրանսպորտի՝ 3, օդային տրանսպորտի՝ 7, երկաթուղային տրանսպորտի՝ 3, քաղաքային էլեկտրատրանսպորտի՝ 3, ավտոմոբիլային ճանապարհների՝ 1 և հիմնական միջոցների գծով՝ 1 հաշվետվության ձևերով, իսկ 125005 ծածկագրով «Ճանապարհատրանսպորտային պատահարներ» վիճակագրական աշխատանքը կատարվել է ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքով սահմանված ճանապարհների ոլորտի հասկացությունների փոփոխությամբ պայմանավորված, ինչպես նաև գործող շինարարական նորմերին համապատասխանելու անհրաժեշտությամբ փոփոխության է ենթարկվել «Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և դրանց կառույցների մասին» Ձև թիվ 1-ՃԱՆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունն ու դրա լրացման հրահանգը, որն ուժի մեջ է մտել 2011թ.-ի հունվարի 1-ից:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի գործունեության տեսակների վերախմբավորմամբ, սահմանումների և հասկացությունների հստակեցման, ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված, փոփոխության են ենթարկվել. «Ավտոմոբիլային տրանսպորտի արտադրանքի և շարժակազմի մասին» Ձև թիվ 1-ԱՎՏՈ(ամսական), «Ավտոմոբիլային տրանսպորտի գործունեության մասին» Ձև թիվ 3-ԱՎՏՈ (տարեկան), «Ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքի և ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարության մասին» Ձև թիվ 1-տրանսպորտ (տարեկան), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» Ձև թիվ 2-ԵՐԿԱԹ (ամսական), «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրան-

⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

քի մասին» Ձև թիվ 65-երկաթ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվություններն ու դրանց լրացման հրահանգները, որոնք ուժի մեջ են մտել 2011թ.-ի հունվարի 1-ից:

ՏԳՏՀԳ-ում (NACE rev. 2) փոստային և սուրհանդակային գործունեության տեսակների վերախմբավորմամբ, սահմանումների և հասկացությունների հստակեցման, ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված, ներդրվել է նոր «Փոստային և սուրհանդակային գործունեության մասին» Ձև թիվ 1-փոստ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունն ու դրա լրացման հրահանգը, որն ուժի մեջ է մտել 2011թ.-ի հունվարի 1-ից:

ՀՀ ՎՊԽ 07.07.2010թ. նիստում, համապատասխանաբար՝ 14-Ն, 15-Ն, 16-Ն, 17-Ն, 18-Ն, 19-Ն և 20-Ն որոշումներով հաստատվելուց հետո վերոշարադրյալ պետական վիճակագրական հաշվետվական ձևերն ու դրանց լրացման հրահանգները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարությանը և ստացել պետական գրանցում:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և տրանսպորտի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի և ք. Երևանի, տրանսպորտի տեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

1.2.6. Կապ⁶

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 9 աշխատանքները (126001-126009 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Կապի համակարգի գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 9 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական, 1 եռամսյակային և 7 տարեկան պարբերականությամբ:

ՏԳՏՀԳ-ով (NACE rev. 2)՝ կապի ոլորտի գործունեության տեսակների վերախմբավորմամբ, սահմանումների և հասկացությունների հստակեցման, ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ պայմանավորված, փոփոխության են ենթարկվել «Հեռագրական կապի և հեռախոսային ցանցի ծառայությունների մասին» Ձև թիվ 11-ԿԱՊ (եռամսյակային), «Հեռուստառադիոծրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեությունից ստացված եկամուտների մասին» Ձև թիվ 13-ԿԱՊ (ամսական), «Հեռագրական կապի մասին» Ձև թիվ 31-ԿԱՊ (տարեկան), «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 41-ԿԱՊ (տարեկան), «Հեռախոսային կապի միջոցների և աշխատանքի որակի մասին» Ձև թիվ 42-ԿԱՊ (տարեկան), «Հեռուստատեսության, ռադիոհեռարձակման և ռադիոկապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 51-ԿԱՊ

⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

(տարեկան) պետական վիճակագրական հաշվետվություններն ու դրանց լրացման հրահանգները, որոնք ուժի մեջ են մտել 2011թ.-ի հունվարի 1-ից:

«Կապի կազմակերպությունների մասին» Ձև թիվ 18-ԿԱՊ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու դրա լրացման հրահանգը ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ հաշվետվության ձևի ցուցանիշները և լրացման հրահանգը ներառվել են այլ պետական վիճակագրական հաշվետվական ձևերում, մասնավորապես, «Փոստային և սուրհանդակային գործունեության մասին» Ձև թիվ 1-ՓՈՍ (ամսական), «Հեռագրական կապի մասին» Ձև թիվ 31-ԿԱՊ (տարեկան) և «Միջքաղաքային և միջազգային հեռախոսային կապի տեխնիկական միջոցների մասին» Ձև թիվ 41-ԿԱՊ (տարեկան) :

ՀՀ ՎՊԽ 07.07.2010թ. նիստում, համապատասխանաբար՝ 21-Ն, 22-Ն, 23-Ն, 24-Ն, 25-Ն, 26-Ն և 27-Ն որոշումներով հաստատվելուց հետո վերոշարադրյալ հաշվետվական ձևերն ու դրանց լրացման հրահանգները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարություն և ստացել պետական գրանցում:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են կապի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ ⁷

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 11 աշխատանքները (127001-127011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Առևտուր և այլ ծառայությունների գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 9 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1 տեղեկանքով և 1 դիտարկման ձևով (7 ամսական, 1 եռամսյակային, 3 տարեկան), որոնցից 8-ը՝ առևտրի (5-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 2-ը՝ տարեկան պարբերականությամբ), 2-ը՝ ծառայությունների (ամսական պարբերականությամբ) և 1-ը՝ առևտրի և ծառայությունների գծով (տարեկան պարբերականությամբ):

Երևան քաղաքում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա առևտրի շրջանառության ծավալի: Ընտրանքային դիտարկման նյութերն օգտագործվել են տեղեկատվական ամսական զեկույցներում:

Իրականացվել է պետական վիճակագրական հաշվետվությունների 3 ձևերի (Ձև թիվ 1-առևտուր՝ «Առևտրի շրջանառության մասին», Ձև թիվ 1-ծառայություններ՝ «Ծառայությունների ծավալի մասին», Ձև թիվ 1-ՏՏ՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին») արդիականացում, հավաքագրվող ցուցանիշների լրամշակում, ինչպես նաև դրանց լրացման հրահանգների վերանայում:

⁷ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Կատարվել են պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման և ամփոփելու ելքային աղյուսակների ստացման համար համակարգչային ծրագրերի փոփոխություններ և լրացումներ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են առևտուրը և ծառայությունները բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

Իրականացվել են առևտրի և ծառայությունների ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի ամենամսյա արդիականացման աշխատանքներ:

1.2.8. Կազմակերպությունների տնտեսական գործունեությունը⁸

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 7 աշխատանքները (128001-128007 ծածկագրեր՝ 2-ը եռամսյակային և 5-ը տարեկան պարբերականությամբ) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2010 թվականին տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային եղանակով վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրի գործող կազմակերպությունների արդիականացված բազայից:

ՀՀ ԱՎԾ կողմից կազմակերպություններն ըստ աշխատողների թվաքանակի և հասույթի չափերի (2009թ. արդյունքներով), խմբավորվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: Ընդ որում, 1283 խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ 10215 փոքր և գերփոքր կազմակերպությունների բազայից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի, ընտրվել են 983 կազմակերպություններ: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա: Նախապես ճշգրտվել են ընտրանքում ընդգրկված կազմակերպությունների գործունեության հիմնական տեսակի ծածկագրերն ըստ SԳ-SՀԳ-ով (NACE rev. 2):

Մշակվել և ՀՀ ՎՊԽ հաստատմանն են ներկայացվել «Կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, բանկային վարկերի և փոխառությունների վերաբերյալ» ձև թիվ 6-Ֆ (եռամսյակային)», «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև թիվ 1-SԳ (եռամսյակային)» և «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև թիվ 1-SԳ (տարեկան)» պետական վիճակագրական հաշվետվությունների փոփոխված ձևերը և լրացման հրահանգները:

ՀՀ ՎՊԽ 25.01.2010թ. նիստում, համապատասխանաբար՝ 02-Ն (հավելված 1), 04-Ն (հավելված 1), 07-Ն (հավելված 1), 02-Ն (հավելված 2) որոշումներով հաստատվելուց հետո վերոշարադրյալ հաշվետվական ձևերն ու դրանց լրացման հրահանգները ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարություն և ստացել պետական գրանցում:

⁸ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

1.3. Գներ և սակագներ⁹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 54 աշխատանքները (131001-131032, 132001-132005, 133001-133006, 134001-134005, 135001, 136001-136002, 137001-137003 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են հետևյալ գների ինդեքսները.

- ♦ սպառողական գների ինդեքս (ըստ հանրապետության և 12 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 470 անվանում ապրանք-ծառայություններով,
- ♦ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս ըստ ՏԳՏՀԴ-ի,
- ♦ (գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքս (ըստ հանրապետության, իրացման ուղիների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի),
- ♦ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների),
- ♦ բեռնափոխադրումների սակագների ինդեքս (ըստ հանրապետության, տրանսպորտի տարատեսակների (երկաթուղային, օդային, ավտոմոբիլային և խողովակաշարային)),
- ♦ արտաքին առևտրի գների ինդեքս՝ մշակվել են ամսական պարբերականությամբ, 4 ուղղություններով՝ ըստ բոլոր երկրների, ԱՊՀ երկրների և ոչ ԱՊՀ երկրների: «Ոչ ԱՊՀ երկրներ» խմբից իրականացվում է նաև գների ինդեքսների հաշվարկ ըստ Եվրամիության երկրների:
- ♦ 95 անվանում կարևորագույն ապրանքատեսակների գների օպերատիվ 10-օրյա դիտարկում (ըստ հանրապետության և հետազոտվող 12 բնակավայրերի, որի հիման վրա կատարվում է գնաճի հաշվարկ (օպերատիվ գնահատական) հանրապետությունում):
- ♦ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ներկայացված շինարարության գների ինդեքսների հիման վրա իրականացվել են այդ բնագավառում գների ինդեքսների լրահաշվարկներ:

Իրականացվել է արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործում, ՏԳՏՀԴ-ի վերանայմամբ (անցում խմբ. 1-ից խմբ. 2-ին) պայմանավորված, վերանայվել են նաև գների ինդեքսների հաշվարկման կարգը, գների դիտարկման հաշվետվական ձևը և լրացման հրահանգը, և արդյունքում դրանք գործողության մեջ են դրվել 2010թ. հունվարից: Իրականացվել է դիտարկվող արտադրատեսակների վերակողմավորում և գների ինդեքսների հաշվարկ (2008-2010թթ. համար)՝ համապատասխան դասակարգչի նոր խմբագրության:

ՀՀ բոլոր տարածաշրջանների 187 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 7480 գյուղացիական տնտեսություններում կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների, քանակի ու ծավալների ամենամսյա հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են

⁹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսներն իրացման 3 ուղիներով (մթերող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, գյուղատնտեսական մթերքի շուկայում (61 ապրանքատեսակ)), և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ (92 անվանում արտադրության միջոցներ):

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ ամսական, եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ), տարեկան կտրվածքներով՝ 2008-2010թթ. համար:

ՀՀ ԱՎԾ-ն մասնակցել է 2008թ. տվյալներով ՀՆԱ-ի և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների ծրագրի աշխատանքներին, ինչի վերջնական արդյունքները Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության կողմից արդեն իսկ հրապարակվել են:

Նախապատրաստական ծավալուն աշխատանքներ են իրականացվել 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրին մասնակցելու համար: Մասնավորապես, փոխհամագործակցության հուշագիր և պայամանգիր է ստորագրվել ՀՀ ԱՎԾ և ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի միջև: Դիտարկվել և ճշգրտվել են շուրջ 2460 անվանում սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների ցանկը, տեխնիկական բնութագիրը, ՀՀ շուկայի համար դրանց ներկայացուցչականությունը: Պատրաստվել են գնային տեղեկատվության մուտքագրման էլեկտրոնային աղյուսակներ: Կատարվել են հրահանգավորումներ գների դիտարկող մասնագետների մասնակցությամբ:

Կազմակերպվել և վերահսկվել են ՀՀ տարածաշրջաններում և բնակավայրերում գների դիտարկման աշխատանքները:

ՀՀ-ում գների վիճակագրության որոշ մեթոդաբանական հարցերի շուրջ (այդ թվում ՍԳԻ-ի) կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան մասնագետների հետ:

ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի տեղեկատվության թարմացման և վերակառուցման նպատակով, պատրաստվել ու լրացվել են տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ գների ինդեքսների մասին տվյալների շարքեր:

ՀՀ-ում շինարարության գների ինդեքսների և անշարժ գույքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանական հարցերի շուրջ հանդիպումներ են եղել ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մասնագետների հետ և քննարկումներ իրականացվել:

1.4. Աշխատանքի շուկա¹⁰

1.4.1. Ձրադավաժություն և գործազրկություն¹⁰

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի վիճակագրական 6 աշխատանքները (141001-141006 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 4 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 2-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Արդիականացվել և ընդլայնվել է ոչ միայն տեղեկատվություն ներկայացնող վիճակագրական միավորների, այլ նաև՝ սկզբնական տվյալների էլեկտրոնային բազաներ ներկայացնողների քանակը:

Կատարելագործվել են և՛ սկզբնական և՛ ամփոփ տվյալների մշակման համակարգչային ծրագրերը, ընդլայնվել էլքային աղյուսակների ցանկը:

Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության ինտեգրման եղանակով հաշվարկվել են ՀՀ աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռն ըստ մարզերի, զբաղվածների թվաքանակն՝ ըստ մարզերի, տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության հատվածների, սեռի:

ԱՄՀ ՏՏՀՍ-ի աշխատանքի վիճակագրության մեթատվյալները համապատասխանեցվել են Տվյալների որակի գնահատման համակարգի պահանջներին և արդիականացվել:

1.4.2. Աշխատավարձ¹⁰

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի 142001-142005 ծածկագրերով վիճակագրական 5 աշխատանքները (վարձու աշխատողների աշխատավարձն ըստ սեռի, մարզերի, գյուղ/քաղաք բաշխվածության, տնտեսական գործունեության տեսակների, հատվածների, վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության չափի, աշխատավարձի ժամկետանց պարտքի, գործատուի կողմից աշխատուժի վրա կատարված ծախսերի) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 5 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական և 4 տարեկան: Ծարունակվել է հաշվետվային ձևերի համակարգչային մշակման ծրագրերի արդիականացումը: Ընդլայնվել է էլքային աղյուսակների և տեղեկատվություն ներկայացնող վիճակագրական միավորների քանակը:

Նոր խմբագրությամբ ՏԳ-ՏՀԳ-ին (NACE rev.2) անցնելու նպատակով տվյալների բազաներում և էլքային աղյուսակների ստացման ալգորիթմներում զգալի փոփոխություններ են կատարվել: Արդյունքում՝ «հատվող» փոփոխականների մասով հնարավորինս ապահովվել է նաև աշխատանքի վիճակագրության և բիզնես ռեգիստրի բազաների նույնականությունը:

Վերանայվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթի մաս կազմող «Զբաղվածություն» բաժինը՝ ներառելով Ասիական զարգացման բանկի կողմից առաջարկվող հատուկ հարցախումբը, ինչը հնարավորություն է

¹⁰ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

ընձեռնել կատարելագործել զբաղվածության և, մասնավորապես, ոչ ֆորմալ զբաղվածության վիճակագրությունը: Ըստ այդմ՝ արդիականացվել են ոչ միայն տեղեկատվության մուտքագրման փուլի համար անհրաժեշտ ստուգիչ ալգորիթմներն, այլ նաև ելքային ցուցանիշների հաշվարկման ալգորիթմները: Տրամաբանական ստուգման-ճշգրտման է ենթարկվել նաև համապատասխան տվյալների բազան, որի վերլուծության արդյունքում պատրաստվել է ազգային զեկույց (երկլեզու) «Ոչ ֆորմալ տնտեսությունը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում»:

Միաժամանակ, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և Եվրոստատի ստանդարտների հետ հնարավորինս ներդաշնակեցման նպատակով վերանայվել է նաև տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի հետազոտությամբ ստացվող որոշ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը, ընդլայնվել՝ աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշների կազմը:

1.5. Բիզնես ռեզիստր¹¹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով երկու վիճակագրական աշխատանքները (150001 և 150002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Վարչական ռեզիստր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալությունից և ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեից, սահմանված կարգով, ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ, որոնք մշակվել և համադրվել են բիզնես ռեզիստրի տվյալների արդիականացման նպատակով:

Բիզնես ռեզիստրի ձևավորման և արդիականացման նպատակով ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններից, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել են իրենց վիճակագրական մոնիթորինգներում առկա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բազաները:

2010թ. իրականացվել է 14000 իրավաբանական անձանց և 9000 անհատ ձեռնարկատերերի 2009թ. տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը:

Կատարելագործվել են տեղեկատվության ստուգաճշտման, մուտքագրման և վերլուծության համակարգչային ծրագրերը:

1.6. Մասնավորեցում¹¹

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 1 վիճակագրական աշխատանքը (160001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

ՀՀ կառավարությանն առնթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից ներակայացվող մասնավորեցման արդյունքների վերաբերյալ տեղեկանքները զետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:

¹¹ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

1.7. Վիճակագրական դասակարգիչներ¹²

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքները (170001 և 170002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Տեխնիկատնտեսական ու սոցիալական տեղեկատվության դասակարգիչների ներդրման նպատակով, հիմք ընդունելով Եվրոպական Համայնքի փորձագետների աշխատանքային խմբի մշակած Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի 2008թ.-ի վերանայված տարբերակը (CPA 2008) իրականացվել է նշված դասակարգչի վերոհիշյալ տարբերակի թարգմանությունը: Վերանայված դասակարգչի նախագիծը համապատասխան գրություններով կարծիքի է ներկայացվել թվով 20 շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև զետեղվել ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում՝ սպառողների առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով:

Զուգահեռաբար, շարունակվել են նաև ըստ ՏԳՏԳ 2008 թվականի վերանայված տարբերակի՝ պետական վիճակագրության բնագավառում ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որի առնչությամբ մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) համապատասխանեցվել են դասակարգչով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

Ծրագրից դուրս, նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել նաև «Ըստ նպատակների՝ անհատական սպառման» դասակարգչի և դրա պարզաբանումների մշակման ու տեղայնացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում «Վիճակագրության համար տարածքային միավորների անվանացանկ» (ՆԱԹՍ) (հաստատված Եվրախորհրդարանի 2003 թվականի մայիսի 26-ի թիվ 1059/2006 որոշմամբ) դասակարգչի ներդրման նպատակով մշակվել է «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի Հանրապետության դասակարգիչը», որն ընդունվել է ՀՀ ՎՊԽ 2010թ. հունվարի 25-ի թիվ 01-Ն որոշմամբ և հրապարակվել ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում (թիվ 7 (359), 15.03.2010թ.):

1.8. Պետական ռեզիստր¹²

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքը (180001 և 180002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից ներակայացվող գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև ՀՀ-ում օտարերկրյա առևտրային իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվել է «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

¹² Տես՝ Ծրագիր, Հավելված I:

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ¹³

Ծրագրով նախատեսված թվով 23 վիճակագրական աշխատանքներից (200001-200004, 300001-300018 և 112013 ծածկագրեր) տվյալ տարում կատարման ժամկետ ունեցող աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ, իսկ 300016, 300017 և 300018 ծածկագրերով աշխատանքների կատարման ժամկետը նախատեսված է 2011 թվականին:

2010թ. ընթացքում ամսական պարբերականությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունից հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ պետական բյուջեի վերաբերյալ (ըստ ֆինանսավորման), իսկ եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականի, ինչպես նաև ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ դրամավարկային և բանկային համակարգի վիճակագրության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում, ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել են ՀՀ կենտրոնական և ընդհանուր կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ՀՀ կենտրոնական բանկից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և տեղադրվել ՀՀ ԱՎԾ կողմից ՏՏՀՄ ձևաչափով վարվող Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում, իսկ դրանց մեթոդաբանական նկարագրությունները (մեթատվյալները)՝ ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում ու ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում:

ՀՀ ԿԲ-ից ամսական պարբերականությամբ ստացվել են նաև ֆինանսական շուկայում ձևավորված ամենօրյա և ամսական միջին փոխարժեքների վերաբերյալ տեղեկություններ:

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ¹³

Ծրագրով նախատեսված սույն հատվածի թվով 60 վիճակագրական աշխատանքները (410001, 411001-411014, 412001-412021, 420001-420010, 430001-430010, 440001, 450001, 460001, 470001 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (15 ամսական, 25 եռամսյակային, 2 կիսամսյակային և 18 տարեկան):

Ոլորտի վերաբերյալ սկզբնական վիճակագրական տվյալները հավաքագրվել և մշակվել են թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (4-ը՝ միջազգային ծառայությունների առևտրի գծով, 1-ը՝ օտարերկրյա ներդրումների, 1-ը՝ բնական գազի ներմուծման և 1-ը՝ զբոսաշրջության):

Բացի այդ, արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես ՀՀ կառավարությանն առընթեր պետական

¹³ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

եկամուտների կոմիտեից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալների բազաները, ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկանքները:

Կազմվել են.

-2009թ. IV եռամսյակի և տարեկան, 2010թ. I, II և III եռամսյակների «ՀՀ վճարային հաշվեկշիռները» և «ՀՀ միջազգային ներդրումային դիրքը», ինչպես նաև «ՀՀ համախառն արտաքին պարտքը և արտաքին ակտիվները», ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության:

Հավաքագրվել են.

-ամսական պարբերականությամբ՝ տվյալներ արտաքին առևտրի, մասնավորապես բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի, բնական գազի ներմուծման և էլեկտրաէներգիայի ներմուծման ու արտահանման ծավալների վերաբերյալ,

-եռամսյակային պարբերականությամբ՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջության, տրանսպորտ, մշակույթ, ապրանքներ ձեռքբերված տրանսպորտային կայաններում, ֆինանսական և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը), բանկային վիճակագրության վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին անդամակցությամբ պայմանավորված, շարունակվել է վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերի, ապրանքների արտաքին առևտրի մեթատվյալների վերանայումը և դրանց գեոտեղումը Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

Մինևույն ժամանակ, սկսած 2009թ. մայիսից ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում, ամսական կտրվածքով, տեղադրել են ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների (արտահանում և ներմուծում՝ ըստ ապրանքի ծագման երկրի և առևտուր անող երկրի հատկանիշների) դինամիկան, սկսած 1995թ.-ից՝ ըստ գործընկեր երկրների, իսկ 2010թ. հուլիսից՝ նաև ՀՀ վճարային հաշվեկշռի, իսկ դեկտեմբերից՝ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի և ՀՀ համախառն արտաքին պարտքի ցուցանիշների շարքերը:

Համաձայն ՀՀ ԱՎԾ և Եվրոստատի միջև կնքված արտաքին առևտրի տվյալների փոխանակման Համաձայնագրի, յուրաքանչյուր եռամսյակ Եվրոստատին ներկայացվել են արտաքին առևտրի տվյալները 8-նիշ դասակարգմամբ, համապատասխան մակետով, իսկ 2009թ. տարեկան տվյալները նույնպես 8-նիշ դասակարգմամբ ներկայացվել են նաև ՍԱԿ-ի վիճակագրական բաժին:

ՀՀ վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի և արտաքին առևտրի տվյալները եռամսյակային կտրվածքով Ինտեգրացված թղթակցության համակարգի (ԻԹՀ) միջոցով տեղադրվել են ԱՄՀ կայքէջում:

5.1.Ժողովրդագրություն¹⁴

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 23 վիճակագրական աշխատանքների (511001-511010, 512001-512007, 513001-513006) կատարումն ապահովվել է ամբողջությամբ՝ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Աշխատանքներ են տարվել բնական շարժի, միգրացիայի, բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկի, ծնելիության և մահացության ցուցանիշները բնութագրող ելքային աղյուսակների ստացման համակարգի լրամշակման ուղղությամբ:

2010թ. հունվարի 1-ի դրությամբ անց է կացվել հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառում, որի արդյունքներով Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվություններ են ստացվել բոլոր 866 գյուղական համայնքներից: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, առկա և մշտական բնակչության թվաքանակի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամներից՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունների կողմից ներկայացվել են նաև ամփոփ տեղեկագրեր, որոնցում ամփոփված են բոլոր գյուղական բնակավայրերի հիմնական ցուցանիշներն ըստ տարածաշրջանների:

Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվության մեքենայական մշակման արդյունքում ստացվել են գյուղական առկա և մշտական բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, տնային տնտեսությունների քանակի և ՀՀ մարզերի ու տարածաշրջանների զբաղված բնակչության թվաքանակների բաշխումը բնութագրող ելքային աղյուսակներ:

Գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով պատրաստվել է ՀՀ գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ մարզերի մշտական բնակչության թվաքանակի, ինչպես նաև քաղաքային և թաղային համայնքների մշտական բնակչության թվաքանակներն ըստ ընթացիկ հաշվառման տվյալների ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն, համաձայն ՀՀ վարչապետի 19.03.2010թ. թիվ 186-Ն որոշման պահանջներին:

Ամսական պարբերականությամբ ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային բաժիններից ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ՝ ՀՀ մարզերի, տարածաշրջանների և ք. Երևանի բաշխմամբ, որոնց հիման վրա ամփոփվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները: 2009թ.-ի 12 ամիսների ընթացքում, ինչպես նաև 2010թ. հունվար ամսին գրանցված և փետրվարին ստացված, սակայն ծննդյան կամ մահվան փաստացի ժամկետով 2008թ.-ին տեղի ունեցած, ակտերի մշակման արդյունքում ամփոփվել են 2009թ. բնական շարժի վերաբերյալ վերջնական

¹⁴ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

տարեկան վիճակագրական ցուցանիշները, իսկ մեքենայական բազային ցուցանիշների խմբագրման արդյունքում ստացվել են ելքային ցուցանիշներ (22 ելքային աղյուսակներ):

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված ձև թիվ 19՝ «Եկողի հասցեաթերթիկների» և ձև թիվ 20՝ «Մեկնողի հասցեաթերթիկների» մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային օպերատիվ տվյալներ, որոնց հիման վրա հաշվարկվել են բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները: 2009թ.-ի 12 ամիսների ընթացքում ստացված վիճակագրական կտրոնների մշակման արդյունքում՝ 2010թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են մեքենայական եղանակով բազային ցուցանիշների խմբագրման և վերջնական ելքային տվյալների ստացման աշխատանքները (12 ելքային աղյուսակներ):

ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով՝ բնական շարժի և միգրացիայի ընթացիկ հաշվառման արդյունքներով, իրականացվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի մշտական բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկը 01.01.2010թ.-ի դրությամբ՝ քաղաքային և գյուղական կտրվածքով:

ԱՄՀ ՏՏՀՄ-ին ՀՀ անդամակցության շրջանակում, եռամսյակային պարբերականությամբ, «Բնակչություն» ենթաբաժնի համար հաշվարկվել է բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը և գետեղվել ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքէջում:

Ամսական պարբերականությամբ հաշվարկվել են բնական և մեխանիկական շարժի ամսական օպերատիվ ցուցանիշների հիման վրա՝ ՀՀ բնակչության թվաքանակի միջին ցուցանիշները՝ մեկ շնչի հաշվով ցուցանիշների հաշվարկների համար:

Ավարտին են հասցվել «Աշխատանքային միգրացիայի ընտրանքային հետազոտության» ամփոփման աշխատանքները և տվյալների բազան հանձնվել է ԱՄԿ ազգային փորձագետին՝ վերլուծությունը պատրաստելու նպատակով:

2011 թվականի մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման շրջանակում համակարգվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության կողմից պատրաստվող մեթոդաբանական փաստաթղթերի, 2010 թվականին փորձնական մարդահամարի հարցաթերթի, հրահանգչական փաստաթղթերի մշակման և դրանք ՀՀ ՎՊԽ ներկայացնելու գործառույթները:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Եվրոստատի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հայցերով պատրաստվել և ներկայացվել է տեղեկատվություն՝ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, ծնելիության, մահացության և դրա պատճառների, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության մասին (երկմաս), ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի՝ եկողների և մեկնողների սեռատարիքային կազմի, կրթական մակարդակի, միգրացիայի ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով տեղեկատվություն՝ ըստ ներկայացված հարցաթերթերի:

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի որոշմամբ, 2010 թ. հոկտեմբերի 21-30-ը ներառյալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում և ՀՀ Տավուշի մարզի Գանձաքարի, Գետահովիտի, Խաչքառակի և Աչաջուրի գյուղական համայնքներում անցկացվեց փորձնական մարդահամար, որի նպատակն էր

փորձարկել մարդահամարի մեթոդաբանական, կազմակերպական սկզբունքները, նյութերի մեքենայական մշակման ծրագրերն ու տեխնոլոգիան:

ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի նախապատրաստման աշխատանքներն իրականացվեցին «ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցի» համաձայն (որպես նախագիծ հավանության է արժանացել ՀՀ ՎՊԽ կողմից):

Փորձնական մարդահամարի կազմակերպական աշխատանքների I փուլով կազմակերպվեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում տների/շինությունների ցուցակների կազմման և ՀՀ Տավուշի մարզի վերոնշյալ գյուղական համայնքներում՝ բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների կազմման աշխատանքները, այնուհետև դրանց հիման վրա կազմակերպվեցին նշված տարածքների կազմակերպական պլանները որոնց հիման վրա տարածքները բաժանվեցին հաշվային, հրահանգչական և մարդահամարի տեղամասերի: ՀՀ 2010թ. փորձնական մարդահամարի կազմակերպման, անցկացման և արդյունքների մշակման ընթացքում ներգրավվեցին թվով 174 ժամանակավոր աշխատակիցներ, որոնց վարձատրությունն իրականացվեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

Բնակչության շրջանում փորձնական մարդահամարի անցկացման նպատակների, խնդիրների, անցկացման կարգի և ժամկետների մասին պահանջվող իրազեկման աշխատանքների շրջանակում տպագրվել են բուկլետներ, պաստառներ, պատրաստվել է տեսահոլովակ, երկու հաղորդաշար՝ 3 րոպե և 20 րոպե տևողությամբ, որոնք պարբերաբար եթեր են հեռարձակվել Հանրային 2-րդ հեռուստաընկերությամբ, Սևանի և Իջևանի տեղական հեռուստաընկերություններով:

2010թ. հոկտեմբերի 21-30-ը ներառյալ ընտրված տարածքներում իրականացվեց փորձնական մարդահամար՝ բնակչության հաշվեգրման և հարցաթերթի լրացման եղանակով:

Մարդահամարի լրացված հարցթերթերը վիճակագրական նպատակով մշակման ենթարկվեցին ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչությունում: Կատարվեցին մարդահամարի հարցաթերթի որոշ հարցերի թվային ծածկագրման, այնուհետև տվյալների մեքենայական մշակման աշխատանքները:

Հարցաթերթի վիճակագրական մշակումն իրականացվեց տվյալների ձեռքով մուտքագրման և տվյալների սկաներային մշակման եղանակներով, որը նպատակ ունի համեմատել տվյալների մշակման երկու եղանակների հնարավոր արդյունավետությունը:

5.2 -5.7.Սոցիալական ոլորտ (առողջապահություն և սոցիալական ապահովություն, իրավական ոլորտ, կրթություն և գիտություն, մշակույթ և սպորտ, բնական պաշարներ և շրջակա միջավայր, բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն)¹⁵

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 107 վիճակագրական աշխատանքները (520001-520042, 530001-530009, 540001-540010, 550001-550011, 560001-560024, 570001-570011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

¹⁵ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Ծրագրով նախատեսված այս ոլորտի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 107 վիճակագրական հաշվետվությունների ձևերով: ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մասին» ամսական տեղեկանքով, «Հայաստանի Հանրապետության տարածքի կլիմայական պայմանների և մակերևութային ջրային օբյեկտների վիճակի գնահատում» եռամսյակային տեղեկանքով և «Մակերևութային ջրերի քանակի և որակի մասին» տարեկան տեղեկագրով, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ամսվա ընթացքում դիտված հիդրոօդերևութաբանական պայմանների մասին» ամսական տեղեկանքով, և ՀՀ առողջապահության նախարարության «Առողջություն և առողջապահություն» տարեկան տեղեկագրով, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Հանցագործություններ» տարեկան տեղեկագրով և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայի վերլուծություն» եռամսյակային ամփոփագրով:

Սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 72 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 2-ը՝ ամսական, 6-ը՝ եռամսյակային, 7-ը՝ կիսամյակային և 56-ը՝ տարեկան և 1-ը՝ եռամյա պարբերականությամբ:

Շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 24 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային, 2-ը՝ կիսամյակային, 21-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 11 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային և 10-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Վարչական ռեզիստրների ներդրման և կատարելագործման ուղղությամբ ՀՀ ԱՎԾ-ն համագործակցել է համապատասխան ոլորտները համակարգող նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում.

- կրթության ոլորտի վարչական վիճակագրության վարման աշխատանքներն աշխատանքային քննարկումների փուլում են,
- շարունակվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում վարչական ռեզիստրի ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման աշխատանքները,
- շարունակվել է գործնական օժանդակությունը ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում վարչական վիճակագրական ռեզիստրի ամբողջական ձևավորման գործընթացին:

Շարունակվել են աշխատանքները սոցիալական վիճակագրությանն առնչվող ոլորտների համար վիճակագրական տվյալների մարզային բազաների կատարելագործման ուղղությամբ:

Շարունակվել են առողջապահության և բնապահպանական ցուցանիշների հաշվառման համակարգի մշակման աշխատանքները: Աշխատանքներ են տարվել սոցիալական և բնապահպանության վիճակագրության ոլորտներում համապատասխան ցուցանիշների վերանայման և ներդրման ուղղությամբ:

Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները: Մշակվել և փորձնական ներդրման փուլում են բնապահպանության համակարգում ֆինանսական ներդրումների և ծախսերի ընդհանրացված հաշվառման ձևերը:

5.8.Տնային տնտեսությունների հետազոտություններ¹⁶

Ծրագրով նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների գծով՝ թվով 13 վիճակագրական աշխատանքները (580001-580013 ծածկագրեր), ամբողջությամբ կատարվել են:

Համաձայն Ծրագրի, 2010թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն անց է կացվել տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված ընտրանքային հետազոտություն՝ ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) համաֆինանսավորմամբ:

Տնային տնտեսությունների ընտրանքի չափը մեկ տարվա համար կազմել է 7872 տնային տնտեսություն: Ապահովվել են մարզային կտրվածքով ներկայացուցչական տվյալներ: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 656 տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների ընտրանքում ընդգրկումն իրականացվել է ամենամսյա ռոտացիայի (փոխարինման) եղանակով: Հավաքագրված տվյալների ամփոփումը եկամուտների, ծախսերի, հիմնական սննդամթերքի սպառման, աղքատության և բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների, ինչպես նաև այլ ցուցանիշներով կատարվել է տարեկան կտրվածքով: Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության նախնական տարեկան արդյունքները գետեղվել են «Պարենային ապահովություն և աղքատություն, 2010թ. հունվար-սեպտեմբեր» վիճակագրական տեղեկագրում:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարելագործվել են 2011թ.-ին նախատեսվող տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված ընտրանքային հետազոտության գործիքները՝ հարցաթերթն ու օրագիրը:

Իրականացվել են 2009թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության տվյալների բազայի տրամաբանական ստուգման և կազմավորման աշխատանքները: Ձևավորված բազայի անվանագերծված տարբերակը հետագա վերլուծության համար տրամադրվել է «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ին, Համաշխարհային բանկին, Ասիական զարգացման բանկին, ՀՀ առողջապահության նախարարությանը: 2008-2009թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության միկրոֆայլերը տնային տնտեսությունների մակարդակով տեղադրվել են ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքէջում:

¹⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

2010թ. իրականացվել է Հայաստանի ժողովրդագրության և առողջապահության հարցերի հետազոտությունը:

Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ կառավարությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվել է նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկը՝ միջին ընթացիկ գներով (երկու տարբերակով):

5.9. Պարենային ապահովություն¹⁷

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների՝ «Պարենային ապահովություն և աղքատության վերաբերյալ տեղեկատվության մշակում և ամփոփում» (ծածկագիր՝ 590001) և «Ազգային պարենային հաշվեկշռի կազմում» (ծածկագիր՝ 590002), կատարումն ապահովվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ոլորտների, աշխատանքի վիճակագրության, երեխաների խնամքի և պաշտպանության միջոցառումների, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, գյուղատնտեսական հողերի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների, բույսերի կարանտինի և պաշտպանության միջոցառումների, ազրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի, անտառապահպանության, անտառապաշտպանության և անտառվերականգման միջոցառումների և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների աղքատության վերաբերյալ ցուցանիշները, որոնք եռամսյակային պարբերականությամբ հրապարակվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները՝ կազմվել են 2009թ. առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները:

Եվրոպական հանձնաժողովի ու Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ԵՀ/ՊԳԿ) «Պարենային ապահովության տեղեկատվական համակարգի հիման վրա կայացվող որոշումների բարելավում» ծրագրի շրջանակներում նշված կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ, որոնց արդյունքում սահմանվել են ծրագրի առաջնայնության 4 ոլորտները և տվյալ ոլորտներում իրականացվող միջոցառումները, որոնց մեջ ներառվել են պարենային ապահովության և աղքատության տեղեկագրի կատարելագործումը, պարենային հաշվեկշռի կատարելագործումը, ինչպես նաև գլոբալ տեղեկատվական նախագուշացնող համակարգի (GIEWS) թարմացված տարբերակի ներդրումը, որն էլ կապահովի պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման, մուտքագրման և վերոհիշյալ կազմակերպության ինտերնետային էջում տեղադրման աշխատանքների շարունակականությունը:

Տարվա ընթացքում աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ստորաբաժանումների, շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների աշխատակիցների հետ, որոնց արդյունքների հիման վրա վերանայվել են պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի որոշ խումբ ցուցանիշները:

¹⁷ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

6. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹⁸

2010թ. ընթացքում Ծրագրով նախատեսված էր իրականացնել 2 վիճակագրական հետազոտություն: Ընդ որում, դրանցից 1-ը պետք է իրականացվեր ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, 1-ը՝ ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի համաֆինանսավորմամբ:

-ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին իրականացվել է «Հացահատիկի բերքահավաքի որակի հետազոտություն» (համապատասխան տեղեկանքների մշակման միջոցով հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ժամանակ կորուստների հաշվառման նպատակով),

-ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ համաֆինանսավորմամբ իրականացվել է «Հայաստանի կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (տնային տնտեսությունների)»՝ Հայաստանում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

7. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ¹⁸

7.1-7.5. Վիճակագրական ժողովածուներ (տարեգրքեր), տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական զեկույցներ¹⁸

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով, 2010 թվականին, ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակվել են **57 անուն վիճակագրական հրատարակումներ**՝ ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2010 թվականին ՀՀ ԱՎԾ կողմից հրատարակվել են **19 վիճակագրական ժողովածուներ**:

Հրատարակվել են Ծրագրով նախատեսված «Ազգային ամփոփ տվյալների էջը» և **17 անուն վիճակագրական տեղեկագրեր** (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սոցիալ - տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվել են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկանքների և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ կողմից դրանց ամփոփման, մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում ամփոփված նյութերի (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի

¹⁸ Տես՝ Ծրագիր, Հավելված II:

հաղորդագրություններ, զեկույցներ) հիման վրա: Չեկույցների բովանդակությունը ներկայացվել է ըստ ԱՄՀ մշակած ՏՏԸՀ-ի հատվածների:

Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային պարբերականությամբ ներկայացվել են առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային պարբերականությամբ զեկույցներում ընդգրկվել են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ»՝ ըստ ԱՊՀ Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների, «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ՀՀ ԱՎԾ փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները:

Չեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկություններ զետեղվել են ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>), ինչպես նաև ԱՄՀ <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> ինտերնետային կայքէջերում:

ԱՄՀ ՏՏՀՍ տեղեկագրում առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերենով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp/>՝ երկրի համապատասխան տվյալները:

Միաժամանակ, 2010թ.-ին ՀՀ ԱՎԾ-ն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ հրապարակել է «Ամփոփագիր. Համապետական հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ 2008-2009 արդյունքներով» (հայերեն և անգլերեն) **վիճակագրական զեկույցը:**

Համաձայն Ծրագրի, պատրաստվել են. ամսական պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», եռամսյակային պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր» և ամսական պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը» մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև 8 ամուն թեմատիկ հաղորդագրություններ (ընդամենը թվով 11 ամուն մամուլի հաղորդագրություն):

Համաձայն Ծրագրի, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունները (ներառյալ Երևան քաղաքի գործակալությունը) պատրաստել են **6 ամուն վիճակագրական զեկույցագրեր:**

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» 01.02.2010թ. համաձայնագրով հաստատված հավելված 1-ի, ՀՀ կենտրոնական բանկին 6՝ ամսական, 7՝ եռամսյակային, 2՝ կիսամսյակային, 5՝ տարեկան և 2՝ միանվազ (ըստ անհրաժեշտության) պարբերականությամբ տրամադրվում է ամփոփ վիճակագրական տեղեկատվություն:

**7.6. Վիճակագրական տեղեկատվության տարածումը ՀՀ ԱՎԾ
ինտերնետային էջի միջոցով և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի գործունեությունը**

Շարունակվել են աշխատանքները ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայքէջի՝ www.armstat.am կատարելագործման, վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը բավարարելու, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվության շրջանակն ընդլայնելու և վիճակագրական նյութեր տեղադրելու արդիականացման ուղղությամբ:

2010 թվականի ընթացքում վիճակագրական տեղեկատվության սպառողները ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքէջ են այցելել մոտ 170 հազ. անգամ, ինչը 2009թ. համեմատ աճել է 48 հազարով կամ 39%-ով: Կայքէջում գետեղված էջերի դիտումների քանակն ըստ «Սպայլոգ» (Spylog) հաշվիչի, կազմել է մոտ 842 հազ. էջ:

2010 թ.-ից ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում բոլոր հրապարակումները PDF ձևաչափի հետ միաժամանակ, ներկայացվել են նաև WORD կամ EXCEL ձևաչափերով:

2010թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի «Տվյալների բազաներ» բաժինը համալրվել է նոր վիճակագրական տվյալների բազաներով.

- Վճարային հաշվեկշիռ,
- Միջազգային ներդրումային դիրք,
- Համախառն արտաքին պարտք:

Բոլոր տվյալների բազաները շարունակաբար համալրվել են՝ ի հաշիվ նոր տվյալների ներմուծման:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը ՀՀ պետական պաշտոնական փաստաթղթաշրջանառությունում հայկական համակարգչային տառատեսակների պարտադիր կիրառման մասին, այն համակարգիչներում որոնցում տեղակայված են «Վինդոու-2000» կամ ավելի բարձր օպերացիոն համակարգ, տեղադրվել են հայկական համակարգչային «Գրապալատ» (GHEA Grapat) և «Մարիամ» (GHEA Mariam) տառատեսակները, բացի դրանից տեղակայվել է կոնվերտոր ծրագիր՝ տեքստերը ANSI ձևաչափից Unicode-ի ձևափոխելու համար:

Պատրաստվել են «Հրապարակումներ, 2008-2009» DVD (50 հատ) և «ԱՏԼԱՍ, Հայաստանի Հանրապետությունը մարզերով, 2010» CD (50 հատ) խտասկավառակները:

Մշտապես կատարվել է ՀՀ ԱՎԾ ներքին “Intranet” կայքի սպասարկում ու արդիականացում, ինչպես նաև շաբաթական պարբերականությամբ՝ www.armstat.am ինտերնետային կայքի արխիվացում:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2010թ. տարեվերջին առկա է եղել 10474 միավոր վիճակագրական գրականություն, որից 424-ը ստացվել է 2010թ. ընթացքում: Վիճակագրական գրականությունը համալրվել է աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (60%), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին (40%):

2010 թվականի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ) և զեկույցներ) 2-ական օրինակներ տեղադրվել են գրադարանում:

ՀՀ ԱՎԾ գրադարանի գրանցամատյանում 2010 թվականի ընթացքում գրանցվել է 204 այցելություն, այդ թվում գիտական ոլորտից՝ 10%, միջազգային կազմակերպություններից՝ 10%, պետական մարմիններից՝ 25% և կրթական ոլորտից՝ 55%: